ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.02.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2022/43

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ ԱՆ «Ավան» Հոգեկան առողջության կենտրոն ՓԲԸ
Մասնակից՝ «Էֆ Բի Էյ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԱՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/7» գնանշման հարցում, դեղերի և բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ԱՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/7-3»:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 01.02.2022թ.-ի թիվ 26/26-1/1711-2022 գրությամբ «Էֆ Բի Էյ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>.**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ԱՆ «Ավան» Հոգեկան առողջության կենտրոն ՓԲԸ-ի 14.01.2022թ. գրության հիման վրա, 01.02.2022թ.-ին «էֆ Բի էյ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 01.02.2022թ.-ին:

02.02.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-LO-2022/43 համարի ծածկագիրը:

10.02.2022թ.-ին և 25.02.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 10.02.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 25.02.2022թ.-ին:

2. **<u>ՀՀ ԱՆ «Ավան» Հոգեկան առողջության կենտրոն ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը</u>.**

ՀՀ ԱՆ «Ավան» Հոգեկան առողջության կենտրոն ՓԲԸ-ն 14.01.2022թ.-ին գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնելով հետևյալը.

*«ՀՀ ԱՆ «Ավան հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ԱՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/7» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «էֆ Բի էՅ» ՍՊԸ-ի միջև կնքվել է «ԱՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/7-3» ծածկագրով պայմանագիր, սակայն «էֆ Բի էՅ» ՍՊԸ-ն չի կատարել պայմանագրով սպանձնած պարտավորությունները, մասնավորապես չի մատակարարել ապրանքը /ԷԿԳ ժապավեն թուղթ 30*50 «Biocare» սարքի համար ECG-101G/ ամբողջությամբ, որը պետք է մատակարարված լիներ 2021թ. IV եռամսյակում: Կից ուղարկում «էֆ Բի էՅ» ՍՊԸ-ի տկյալները սև ցուցակում ներառելու համար:»:*

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ԱՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/7» ծածկագրով

հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «էֆ Բի էյ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. «էֆ Բի էյ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Բողոքներ քննող անձը 02.02.2022թ.-ին գրությամբ դիմել է «էֆ Բի էյ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.02.2022թ.-ի թիվ 26/26-1/1711-2022 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին՝ չներկայացնելով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ գրավոր դիրքորոշում:

4. ՍՑ-LO-2022/43 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ ԱՆ «Ավան» Հոգեկան առողջության կենտրոն ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «էֆ Բի էյ» ՍՊԸ-ի միջև 30.03.2021թ.-ին կնքվել է թիվ «ԱՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/7-3» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

iii. Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել 4-րդ եռամսյակ:

iv. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 24.01.2022թ.-ին հրապարակված Պայմանագրի

միակողմանի լուծման մասին ծանուցման (այսուհետ նաև՝ Ծանուցում) համաձայն՝ ՀՀ ԱՆ «Ավան» Հոգեկան առողջության կենտրոն ՓԲԸ-ի (այսուհետ՝ նաև «Գնորդ») և «էֆ Բի էյ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև «Վաճառող») միջև 30.03.2021թ.-ին կնքվել է ապրանքի մատակարարման պետական թիվ ԱՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/7-3 պայմանագիրը, որով նախատեսված՝ Վաճառողի պարտավորությունները մանրամասն նկարագրված են Պայմանագրի անբաժանելի և բաղկացուցիչ մասը կազմող՝ Պայմանագրի թիվ 1 հավելվածով /վաճառողը պարտավոր էր 2021 թվականի IV եռամսյակում մատակարարել ապրանքի նախատեսված քանակը, սակայն չի մատակարարել/:

«էֆ Բի էյ» ՍՊԸ-ի կողմից թույլ է տրվել Պայմանագրի կատարման էական խախտում, որը հիմք է հանդիսանում Պատվիրատուի կողմից Պայմանագիրը միակողմանի լուծելու համար:

Մասնավորապես՝

1. «էֆ Բի էյ» ՍՊԸ-ն Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված ապրանքի մատակարարման ժամկետները խախտել է, և մինչ այժմ չի մատակարարել թիվ 1 հավելվածով սահմանված ապրանքը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7-րդ կետի «բ» ենթակետը՝ Պատվիրատուն ծանուցել է Մասնակցին, որ ՀՀ ԱՆ «Ավան» Հոգեկան առողջության կենտրոն ՓԲԸ-ն 2022 թվականի հունվարի 14-ից միակողմանի լուծում է ՀՀ ԱՆ «Ավան» Հոգեկան առողջության կենտրոն ՓԲԸ-ի և «էֆ Բի էյ» ՍՊԸ-ի միջև կնքված 30.03.2021թ. թիվ ԱՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/7-3 ապրանքի մատակարարման պետական պայմանագիրը:

v. Ծանուցումը անստորագիր է և նշված է ՀՀ ԱՆ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Պ. Ս. Սեմերջյանի անվանումը՝ ՀՀ ԱՆ «Ավան» Հոգեկան առողջության կենտրոն ՓԲԸ-ի անվան փոխարեն:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.02.2022թ.-ի թիվ 26/26-1/1711-2022 գրությամբ «էֆ Բի էյ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների

ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, դեղերի և բժշկական նշանակության ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը

պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 2-րդ բաժնի համաձայն՝

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած դեղերի և բժշկական նշանակության ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր դեղերի և բժշկական նշանակության ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

Վերոնշյալ նորմերի համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար

պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289-րդ հոդվածի համաձայն՝ գործարքները քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարելուն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գրավոր գործարքը պետք է կնքվի փաստաթուղթ կազմելու միջոցով, որն արտահայտում է գործարքի բովանդակությունը և ստորագրված է գործարք կնքող անձի կամ անձանց կամ նրանց կողմից պատշաճ ձևով լիազորված անձանց կողմից:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ ԱՆ «Ավան» Հոգեկան առողջության կենտրոն ՓԲԸ-ի և «Էֆ Բի Էյ» ՍՊԸ-ի միջև 30.03.2021թ.-ին կնքված թիվ «ԱՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/7-3» ծածկագրով պետական գնման պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել 4-րդ եռամսյակ:

www.gnumner.am համացանցային 24.01.2022թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը, միակողմանի լուծել է Պայմանագիրը:

Ծանուցումը անստորագիր է և նշված է ՀՀ ԱՆ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Պ. Ս. Սեմերջյանի անվանումը՝ ՀՀ ԱՆ «Ավան» Հոգեկան առողջության կենտրոն ՓԲԸ-ի անվան փոխարեն:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Նշված իրավանորմերի վերլուծության հիման վրա՝ Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ

պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն՝ միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ԱՆ «Ավան» Հոգեկան առողջության կենտրոն ՓԲԸ-ի և «էֆ Բի էյ» ՍՊԸ-ի միջև 30.03.2021թ. կնքված ապրանքի մատակարարման պետական թիվ «ԱՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/7-3» պայմանագրի լուծման մասին ծանուցումը ստորագրված չէ գործարք կնքող անձի՝ Պատվիրատուի ղեկավարի կողմից և հակասում է ՀՀ քաղաքացիական օրենսգրիք 296-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներին, ինչի արդյունքում նույն օրենսգրքի 289-րդ հոդվածի իմաստով պայմանագրի կողմերի համար չի կարող առաջացնել քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել «էֆ Բի էյ» ՍՊԸ-ին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.02.2022թ.-ի թիվ 26/26-1/1711-2022 գրությամբ «էֆ Բի էյ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-LO-2022/43 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**